600.0430.27.09.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 սեպտեմբերի 2017 թվականի №430Ա

ք. Երևան

«ԱՐՏԱՎԱՆ ՀԷԿ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ԱՐՏԱՎԱՆ ՓՀԷԿ-1» ՓՈՔՐ ՀԻԴՐՈԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՈՒՄ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀԶՈՐՈՒԹՅԱՆ) ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԷ№0586 ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2015 թվականի դեկտեմբերի 23-ի №449Ա որոշմամբ «ԱՐՏԱՎԱՆ ՀԷԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրվել է Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արտավան համայնքի վարչական տարածքում՝ Արփա գետի Արտավան վտակի վրա, «Արտավան ՓՀԷԿ-1» փոքր հիդրոէլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0586 լիցենզիան (այսուհետ՝ ԼԷ №0586 լիցենզիա),

բ) Հանձնաժողովի 2017 թվականի հուլիսի 7-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 23-ի 449Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» №305Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) 2-րդ կետի 2-րդ ենթակետով ԼԷ №0586 լիցենզիայի պայմանները չկատարելու պատճառով, Կայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու համար, Ընկերությանը պարտավորեցվել է Որոշումն ուժի մեջ մտնելու պահից քառասունհինգօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել երկու միլիոն դրամ գումարի նոր երաշխիք՝ մինչև 2018 թվականի օգոստոսի 30-ը գործողության ժամկետով, ինչը չի կատարվել,

գ) Հանձնաժողովը 2017 թվականի օգոստոսի 31-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ Որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջի

խախտման փաստի ուսումնասիրության նպատակով, որի մասին Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2017 թվականի օգոստոսի 31-ի №ԱԲ-2302ի գրությամբ,

դ) վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը որևէ փաստարկ չի ներկայացրել,

ե) վարչական վարույթի շրջանակում փաստվել է Ընկերության կողմից Որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետի խախտման հանգամանքը, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին կետի «զ» ենթակետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետի խախտման հիմքով կասեցնել ԼԷ№0586 լիցենզիայի գործողությունը՝ մինչև խախտման պատճառի վերացումը:

2. Ընդունել ի գիտություն, որ Ընկերությունն իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանը օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ**

ք. Երևան
27 սեպտեմբերի 2017թ.
ժամը 16[00]